

3. Այլաբանական մեկնությունը.-

Փիլոնի փիլիսոփայական *այլաբանական մեկնության* (Allegoric Exegese) «կրկնակի իմաստի եղանակը», որ ինչպես վերը նշուեցաւ, հետագային օգտագործուեցաւ նաեւ Քրիստոնեական եկեղեցւոյ մէջ՝ բազմաթիւ *Եկեղեցւոյ Հայրերու* կողմէ:

Փիլոն որոշ ազդեցութիւն ունեցաւ նաեւ արդէն առկայ եւ հետագային յառաջացած փիլիսոփայական տարբեր ուղղութիւններուն վրայ, ինչպէս՝ *Նոր-Պիթագորականութեան*^[Ծ-45] (Neo-Pythagoreanism), *Միջին-Պլատոնականութեան* եւ *Նոր-Պլատոնականութեան*^[Ծ-41] (Neo-Platonism):

– «Երկու աշխարհ».-

Յոյն փիլիսոփայ Պլատոն, իր «գաղափարներու ուսմունքով» արդէն կը զանազանէր՝ *մտացածին հոգեւոր աշխարհը* (յուն.՝ *kósmos noêtos*), *զգայական երեւութական աշխարհէն* (յուն.՝ *kósmos aisthêtós*): Փիլոն եւս, կը զանազանէր եւ Նոյնիսկ ամբողջովին կը բաժնէր յիշեալ երկու աշխարհները եւ այս բաժանումը Փիլոնի մօտ այնքան խիստ էր, որ Սբ. Գիրքի Հնգամատեանի մէջ ներկայացուած Աստուծոյ երեւոյթը փիլիսոփայ աստուածաբան Փիլոնի համաձայն բոլորովին անկարելի կը թուէր: Այս իմաստով, Փիլոնի համաձայն՝ Աստուծոյ ճանաչումը մարդոց կողմէ անկարելիութիւն մըն է: Հետագային, յիշեալ երկու աշխարհներու երեւոյթը կը գտնենք նաեւ Նոր-Պլատոնական փիլիսոփայութեան մէջ:

– «Երկրորդ Աստուած».-

Փիլոն Ալեքսանդրացի, իր 3 ուժերէն երրորդը *Բանն Աստուծոյ*, կը կոչէ նաեւ «Երկրորդ Աստուած», արդարեւ գաղափար մը, որ հետագային, Նոր-Պիթակորականութեան եւ Միջին-Պլատոնականութեան ոլորտներու մէջ, ունեցաւ իր տարբերակը, որ պլատոնական **Դեմիուրգոս** (յուն.՝ *Dêmiourgós*) աստուածն էր, ինչպէս նշուեցաւ «Փիլոնի աստուածիմաստութիւնը» բաժնին մէջ (Էջ 56):



ՔՆՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ

Փիլոն Ալեքսանդրացիի յուդայական աստուածաբանութիւնը յունական փիլիսոփայութեան հետ համադրելու ու առնչելու փորձը կարօտ է քննարկութեան, նկատի ունենալով յառաջացած կարգ մը անորոշութիւնները:

- Գոյի կամ Նոյնիսքն Աստուծոյ գոյութեան բնութագրումի պարագային, Փիլոն բացայայտօրէն կը տատանի՝ Աստուծոյ փիլիսոփայական եւ իր կողմէ յոյժ գերադասելի Հին Կտակարանի Հնգամատեանի հասկացութիւններուն միջեւ եւ անվճռական կը մնայ:

Մինչ Աստուծոյ փիլիսոփայական հասկացութիւնը կը ներկայանայ, որպէս «ԳՈՅԸ» (յուն.՝ *to on*), Աստուածաշնչեան Հնգամատեանի երկրորդ գիրքին